ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ

ՀՐԱՄԱՆ

15 դեկտեմբերի 2021 թվականի N 217-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի N 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական վերահսկողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի 2018 թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության հաստիքացուցակը հաստատելու մասին» N 1-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հավելվածի 112-րդ և 114-րդ կետերում «իրավախորհրդատու» բառերը փոխարինել «խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող» բառերով.

2) Հավելվածի 119-րդ կետում «ադմինիստրատոր՝ համակարգչային ցանցերի» բառերը փոխարինել «խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

12/15/2021

X

ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Signed by: PETROSYAN ROMANOS 3608790012